600.0714.14.12.18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

14 դեկտեմբերի 2018 թվականի №714Ա
ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի №448Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) 2018 թվականի նոյեմբերի 27-ին «ՄՈԼԲԵՐՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ խնդրելով 2 տարի ժամկետով երկարաձգել Հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 3-ի №448Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրված «Ստեփանավան-1» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0568 լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածը,

բ) Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի 81-րդ կետի համաձայն՝ էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածը երկարաձգվում է նախկինում սահմանված կառուցման ժամանակահատվածից ոչ ավելի՝ հաշվի առնելով լիցենզավորված անձի, ինչպես նաև Հանձնաժողովի աշխատակազմի կողմից հիմնավորվող ժամկետը,

գ) համաձայն Ընկերության դիմումի՝ «Ստեփանավան-1» փոքր հիդրոէլեկտրակայանում 2014 թվականից մինչ օրս որևէ աշխատանք չի իրականացվել,

դ) Ընկերությունը 4-րդ անգամ է կառուցման ժամանակահատվածի երկարաձգման հայտ ներկայացնում Հանձնաժողով,

ե) «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածը, «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-100Ն օրենքի 38-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը պարտավոր է սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից վեց ամսվա ընթացքում սահմանված կարգով լրացումներ և փոփոխություններ կատարել նախկինում տրված լիցենզիաներում,

զ) Հանձնաժողովի նախաձեռնությամբ սույն որոշմամբ կատարվող փոփոխություններն անհրաժեշտ են «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պատշաճ կատարումն ապահովելու համար, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Քսաներկու ամսով երկարաձգել Հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 3-ի «ՄՈԼԲԵՐՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Ստեփանավան-1» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №448Ա որոշմամբ «ՄՈԼԲԵՐՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0568 լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածը՝ որոշման մեջ «մինչև 2018 թվականի դեկտեմբերի 15-ը» բառերը փոխարինելով «մինչև 2020 թվականի հոկտեմբերի 15-ը» բառերով:
2. «ՄՈԼԲԵՐՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ ԼԷ №0568 լիցենզիայի պայմանները չկատարելու պատճառով «Ստեփանավան-1» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը երկարաձգելու համար, սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝

   1) մեկամսյա ժամկետում «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության 2017 թվականի հունվարի 26-ի №01-75 գրությամբ ներկայացված թիվ 170534728 բանկային երաշխիքի համաձայն

երաշխավորված երկու միլիոն չորս հարյուր երկու հազար հինգ հարյուր դրամ գումարից մեկ միլիոն երկու հարյուր մեկ հազար երկու հարյուր հիսուն դրամը 900005028130 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.

2) քառասունհինգօրյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել երկու միլիոն չորս հարյուր երկու հազար հինգ հարյուր դրամ գումարի երաշխիք՝ մինչև 2020 թվականի նոյեմբերի 29-ը գործողության ժամկետով:

3. Հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 3-ի «ՄՈԼԲԵՐՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Ստեփանավան-1» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №448Ա որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

4. «ՄՈԼԲԵՐՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի դեկտեմբերի 15-ից, բացառությամբ 3-րդ կետի, որն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հունվարի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ՝ **Մ. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ**

ք.Երևան
14 դեկտեմբերի 2018թ.